

Չեխիայի Հանրապետության Կարլովի Վարի Երկրամասի պատվիրակությունը՝ Հայաստանում

12.09.2014



2014 թվականի սեպտեմբերի 10-11-ը հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքերին մասնակցելու նպատակով Հայաստան էր ժամանել Չեխիայի Հանրապետության Կարլովարյան երկրամասի պատվիրակությունը՝ նահանգապետ Յոզեֆ Նավոտնու գլխավորությամբ: Չեխական պատվիրակությանը Երևանում հյուրընկալել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը: Նշենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզը միջազգային համագործակցության շրջանակներում ջերմ գործընկերային հարաբերություններ ունի ՀՀ Կարլովի Վարի երկրամասի հետ: Համագործակցության հուշագիր է ստորագրվել ինչպես երկու մարզերի, այնպես էլ Ջերմուկի և Կարլովի Վարի քաղաքների միջև: Սեպտեմբերի 10-ին պատվիրակության անդամները հանդիպեցին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Է.Ղազարյանի հետ: Մարզպետը և նահանգապետ Նավոտնին քննարկեցին երկու տարածաշրջանների միջև հետագա համագործակցության խնդիրները: